

Տ Ո Մ Ա Ր Ա Կ Ա Ն

(ա) Բուժն Թուական Հայոց

(բ) Փրկչական Թուական

(ա) Բուժն Թուական Հայոց: Ազգային պարբերական ժամանակ հաշուելոյ համար՝ մեր ամենահին թուականն կոչուած է Բուժն Թուական Հայոց, որպէս և Հայկայ Շրջան, որոյ սկզբնաւորութիւնն մեր նախնիք ընդունած են որպէս 2492 Ն. Ք. Եթէ նայինք մեր ընթացիկ տարւոյս Օրացոյցին մէջ կը տեսնենք որ յիշեալ թուականն գրուած է որպէս ՏՆԻԳ, կամ 4423 (2492 Ն. Ք. + Ե. Տ. 1931 = 4423 տարի): Յայտնապէս՝ կարի դժուարին է, եթէ ոչ անկարելի, ուէ աստիճան հաստատութեամբ ասել թէ սորա սկզբնաւորութեան սահմանադրութիւնն ի՞նչ հիմանց վերայ տնօրինուեցաւ: Մեր Ազգային հնաւանդ պատմագրութեանց մէջ, մեր նախահօր Հայկոյ մեկնումն Բաբելոնէն և հաստատուին Հարաւային Հայաստանում արձանագրուած է որպէս 2247 Ն. Ք., և նորա պատերազմն ընդդէմ Բէլայ որպէս 2108 Ն. Ք. Այս թուականն (2108 Ն. Ք.), ըստ մեր հնագոյն աւանդական պատմութեանց, համապատասխանում է առաջնագոյն Հայկական Պետութեան հիմնարկութեան, Հայկայ ձեռամբ: Ուրեմն՝ մեր Բուժն Թուականի սկզբնաւորութիւնն ի՞նչպէս ընդունելի եղեւ որպէս 2492 Ն. Ք. Եթէ զոն գիտակց անձինք որք ունենան իւրեանց տրամադրութեան ներքոյ պատմական ուէ հաւաստի տեղեկութիւն սորին առնչութեամբ՝ արժանի է եթէ յօժարին ի լոյս ընծայել զայն «Սիոն»ի մէջ, առ ի ճշգումն: Սակայն և այնպէս, որքան որ գիտելի է մեզ, ի չգոյժ վաւերական յիշատակեալ պարզաբանութեանց, երեւում է մեզ թէ հետեւեալ մեր կարծիքն զուրս չլինի կարելիութեան սահմանէն ի մասին հիմնարկութեան մեր յիշեալ Բուժն Թուականին: Յայտնի է որ ըստ եօթանասնից Հին Կտակարանի թարգմանութեան և ժամանակագրութեանց (յամին 273 Ն. Ք.), Պաղտմէս Փրկաղէլիօսի հրաւիրանք), նոքա վճռեցին Արարչագործութեան թուականն որպէս յամին 5425 Ն. Ք. (որոյ հե-

տեղք ենք և մեք Հայերս — ՏՆ՝, զորօրինակ, ընթացիկ տարւոյս մեր ուէ վստահելի Օրացոյցների ժամանակագրութեանց մէջ յիշատակութիւնն, «ի ստեղծմանէ ախարհի, ամք 7356», այսինքն՝ 5425 Ն. Ք. + Ե. Տ. 1931 = 7356 տարի), և Զրհեղեղն որպէս յամին 3163 Ն. Ք.: Ի մէջ Զրհեղեղին և 2492 Ն. Ք. թուականին՝ 671 տարի ժամանակամիջոց կայ (3163 - 2492 = 671): Հայոց աւանդական հին պատմութիւնն, Հայկայ անմիջապէս նախածնողներին վերաբերութեամբ, երեք սերունդ է հաշուում զինի Նոյի, այսինքն՝ Յարէթ, Թորգոմ և Դոմեր, որոց յաջորդաբար ծնունդն և կենաց տեղութիւնն յիշատակուած չեն Հին Կտակարանին մէջ, ինչպէս որ և տասն նահապետներին՝ Աղամէն մինչև Նոյ (ՄԵՆ. Գլ. Ե.): Ուստի՝ անհաւանական չենք վարկանում որ մեր հնագոյն նախնիք միջին հաշիւ մի որդեգրեցին (ենթադրական ընտրողութիւն մի որ անսովոր երեւոյթ մի չէ ըստ ոմանց Կտակարանական մեկնաբանից՝ անյիշատակեալ ժամանակագրութեանց կապակցութեամբ) նկատմամբ երեք նախածնողաց կենաց հասակներին ի մէջ Նոյի և Հայկայ, ի մտի ունեւոյ հանգերձ այդ ժամանակի արձանագրուած մարզկային կենաց երկարութիւնն, որով և որոշեցին 2492 Ն. Ք. որպէս մեր Բուժն Թուականն՝ զոյգ ընդ Հայկայ անուանն (և, թերեւ, ընդ նորա ծննդեանն): Յիշելի է որ թէպէտեւ մեր Բուժն Թուականն, որպէս և նորա յաջորդ Տոմարական Թուականն (սահմանեալ յամին Ե. Տ. 552), յամէ ամ երեւում են մեր Օրացոյցների մէջ որպէս Ազգային Շրջանացոյցք, սակայն՝ վասն հասարակ կամ ընդհանրական գործառնութեանց մեր Ազգին մէջ, նոքա տեղի տուած են Փրկչական Թուականին:

Ըստ երեւոյթին՝ այդ իսկ անվաներ վերագրութեան պատճառաւ է որ օտարազգի մատենագիրք նկարագրած են մեր բուն թուականն «անորոշ» անհայտաւ, որպէս և նոյնպէս նկատած են հին եգիպտականն: Սակայն և եթէ այդ բաւական չէ որ ի չը գոյ է շօշափելի վկայութեանց բոլորովին հերքենք առ մեզ նորոցս անյայտ և անհասանելի՝ ի հնոցն հրիտակեալ աւանդութիւնքն: Քանզի եթէ այդպէս լինի, ուրեմն

համահաւասար փաստաբանութեամբ՝ կարելի է վիճել, առանց դիմադրութեան, որ չկան ունէ հին Ազգային բուն թուականք, թէ՛ Արեւելեան և թէ՛ Արեւմտեան Ազգաց մէջ որք, բացարձակօրէն հիմնեալք հին աւանդութեանց վերայ, չլինին առարկայ երկրայութեան և ընդդիմաբանութեան, երբ ընդ մոզ անցանելով՝ ենթարկենք զայն քննական խորին զննութեանց: Նոյն իսկ Փրկչական Թուականն, հնարեալ և հաստատեալ ձեռամբ գիտնական Դիոնիսիոս «Կրտսեր» (Dionysius Exiguus) յամին Յ. Տ. 525, և յետ այնու տակաւ առ տակաւ որդեգրեալ համայն Քրիստոնեայ Ազգաց մէջ, նիւթ եղած է հակաճառութեան՝ ումանց մեկնաբանից կողմանէ (թէպէտև սոքա կազմեն փոքրամասնութիւն մի), ըստ իւրեանց նկատողութեան Քրիստոսի Մնունդն չորս տարի անագան համարելով՝ բողոքատեալ ընդ մեր ընտանի Յաւի Տեառն Թուականին:

(Բ) Փրկչական Թուական: Սորին առնչութեամբ՝ ի ճահ ենք համարում նախ համառօտիւ յիշատակել գոյութիւնն մէկ նշանաւոր ժամանակաբանական շրջանի որ կոչուած է Յուլեան Շրջան, և որ կարեոր դեր է կատարում սոյն խնդրոյն հաշուեբանութեան մէջ, բայց որ կապակցութիւն չունի ունէ Ազգային Թուականի հետ: Նորա սկզբնաւորութիւնն զետեղուած է ի 1 Յունուարի, յամին 4713 Ն. Ք., որոյ լիակատար ընթացից տեւողութիւնն է 7980 տարի: Այն կայանում է որպէս առաջնորդող մէկ զսպանակ, Եկեղեցային Տոմարական երեք ենթաշրջաններ, ընդգրկելով և համարողմանդակելով երկարութեանց սահմաններն՝ «Արեգակնային Շրջանի» (Եօթներեակի) 28 տարին, «Լուսնային» կամ «Մետոնեան» (Իննետասներեակի) 19 տարին, և Հռոմէական «Ինդիկլըն» (Ընդիկլտիոն Endiction) 15 տարին: Բազմապատկելով $28 \times 19 \times 15$, արդիւնքն լինում է 7980 տարի, այսինքն, սկսեալ ի 1 Յունուարէն, 4713 Ն. Ք., երբ 7980 Յուլեան տարիներ անցանեն՝ վերստին զուգադիպումն կը լինի այդ երեք ենթաշրջանների միասին սկզբնաւորութեանցն:

Արդ՝ վերագառնալով առ մեր նիւթն, բաւական է կարծեմ ի՞նչ յանդիման առնենք հակաճառութեանց թեր ու գէժ յատ-

կութեանց նշանաւորն միայն՝ ի սակա Քրիստոսական Թուականին: Անտարակոյս բազմաց ծանօթ է որ մինչև վեցերորդ դարու առաջին քառորդի վերջն համայն Քրիստոնեայ ազգերն, սնրացաւորաբար, զործէին ամուս իւրեանց յատուկ սեպհական ազգային թուականներն, յորում ժամանակի Փրկչական Թուականն ո՛չ գոյութիւն ունէր և ո՛չ անգամ այն լսուած էր ունէ Քրիստոնեայ երկրում: Որպէս յիշեցինք ի վեր՝ Դիոնիսիոս «Կրտսեր» առաջինն էր որ գտաւ և հաստատեց զայն յամին Յ. Տ. 525, և որ յետ այնու ընդհանրացաւ համայն Քրիստոնէից մէջ: Նա հիմնեց իւր հաշուեբանութիւնն այն փաստին վերայ թէ Քրիստոսի Մնունդն տեղի ունեցաւ յընթաց Հռոմէայ հիմնարկութեան թուականի 753րդ տարւոյն, զոր համապատասխան գտաւ ընդ «Յուլեան» կոչուած Տոմարական Շրջանի 4713րդ տարւոյն, ապացուցանելով ընդ նմին՝ թէ երեսուն և երեք տարի յետ այնորիկ, այսինքն՝ յընթաց 4746րդ տարւոյ Նոյն շրջանին, Զատիկական լուսնոյ լրումն իրօք պատահեցաւ Ապրիլ 3ին, յաւուր Ուրբաթու, զուգացեալ ընդ Հրէից Պասքին, յորում աւուր տեղի ունեցաւ մեր Փրկչին խաչելութիւնն: Դիոնիսիոս և իւր համահաւան հետեւորդք, համոզելի հաշիւներով, սոյն փաստաբանութիւնն իւրա տաւել ամրացուցին այն զօրաւոր տրամաբանութեամբն թէ լուսնոյ լրումն չդիպեցաւ յաւուր Ուրբաթու բողոմ տարիներ նախ քան կամ զկնի յիշեալ թուականէն: Սակայն՝ հակառակ դաւանողք պնդում են թէ լուսնոյ լրման զիպումն, յաւուր Ուրբաթու, տեղի ունեցաւ ըստ մեր արդի գործածական թուականին՝ յամին Յ. Տ. 29, և թէ որովհետեւ Յիսուս երեսուն և երրորդ տարումն էր երբ նա հանգեաւ, Իւր Մնունդն չորս տարով յառաջ էր քան ինչ որ ընթացիկ է Քրիստոնէից մէջ:

Անդա՛նօր՝ ունինք և այլ պաշտպանողք Դիոնիսիոսն փաստաբանութեանն, որք կոչում են ի վկայութիւն Դանիէլի Մարգարէութիւնն, այն է, «Եօթանասուն և եօթներորդք համառօտեցան ի վերայ ժողովրդեան քոյ, և այնն» (Կլ. Թ. 24), այսինքն, 490 տարի զկնի վերահաստատման Հրէից Օրինաց և Կրօնից Երուսաղէմում:

Մեխիաի կեանքն կը վերջանար (Տե՛ս, Դան. Գլ. Թ. 24-27): Դիտելի է որ Կտակարանական Մեկնիչք, համաձայն ընդունելութեամբ, «Եօթներորդք» (կամ շաբաթական Եօթն օրն), Եօթն Տարի յարասելով, հաշուած են «Եօթանասուն Եօթներորդքն որպէս $70 \times 7 = 490$ տարի: Արգ՝ Սողոմոնայ Տաճարն այրեցաւ ձեռամբ Նաբուգոդոնոսորայ յամին 586 Ն. Բ. եւ Հրէից ազգն գերեզմարեցաւ ի Բաբելոն: Կիւրոս գրաւեց զԲաբելոն յամին 538 Ն. Բ. Յերկրորդում ամի թագաւորութեանն Վշտասպեան Դարեհի, այսինքն՝ յամին 520 Ն. Բ., նոր Տաճարի հիմնարկութիւնն վերսկսաւ վերակաշուիթեամբ Զօրարարելի, որոյ նուիրական նաւակատիքն տեղի ունեցաւ յամին 516 Ն. Բ. Եւ մամէն 586 մինչ յամին 516 Ն. Բ. Եօթանասուն տարի ժամանակամիջոցն է յորժամ Հրէայք գերի էին ի Բաբելոն: Վտարանջեալ այս ժողովուրդն, Տաճարի վերստին շինութենէն ղկնի, փութաց խումբ առ խումբ վերադառնալ իւրեանց սիրելի Հայրենիքն — յերուսաղէմ: Բայց, յերեսաց պարտադրիչ գերութեան օտար աշխարհում, իւրեանց կրօնքն ապականուած էր եւ ազգն չազատեալ ամպարշտութեամբ, ուստի անհրաժեշտ էր մաքրագործելոյ եւ վերածելոյ զամենայն առ իւրեանց նախկին վիճակն՝ ըստ բուն Մովսիսական Օրինացն: Հին Կտակարանի մէջ յիշուած են երկու աշխատութիւնք վերակաշարք որ հռչակուոր հանդիսացան՝ լիութի կատարումն տալով այս ստիպողական նպատակին, այսինքն, զլիսաւորապէս՝ եզր (կամ եզրաս), «Քահանայ եւ պատմիչ օրինացն Տեառն», եւ երկրորդապէս՝ Նեեմի, իրաւամբ «Բաբելոնացի Հայրենասէր» վերածայնեան ի մէջ Հրէից: Արտաշէս Ա. «Երկայնաձեռն» բարձրացաւ Պարսից Քահանայ յամին 465 Ն. Բ., Եօթն տարի ղկնի որոյ, այսինքն՝ յամին 458 Ն. Բ., նա շնորհեց եզրին իւր համբաւաւոր Հրովարտակն, «Թագաւոր Արտաշէս՝ եզրի քահանայի՝ եւ պատմիչի օրինացն Տեառն, ողջոյն եւայն» (Տե՛ս եզր Ա. Գլ. Ը. 10-27), որով եզր կարողացաւ վերահաստակ Հրէից բուն օրէնքներն՝ աջակցութեամբ Նեեմի: Այս թուականն, 458 Ն. Բ., զուգադրւումն է Դանիէլի Մարգարէութեանն: Յիսուս Բաւն եւ ինն ամոց հասակի էր, կամ, ըստ Դուկասու,

նորա երեսներորդ տարին նոր սկսում էր, «Յիսուս էր ամաց իրրեւ երեսնից սկսեալ» (Դլ. Գ. 23), երբ նորա Մկրտութիւնն տեղի ունեցաւ «ի հնգեասաներորդի ամի տէրութեանն Տիրերեայ Կայսեր» (Դլ. Գ. 1), որոյ զահակաւութիւնն տեղի Հոգիմայ Հիմարկութեան թուականի 767 էն մինչեւ 790, կամ Յ. Տ. 14-37, որ նշանակում է Մկրտութեան թուականն էր Յամին Տեառն 29 (Յ. Տ. 14 + 15 = Յ. Տ. 29), ղկնի որոյ նորա Քարողութիւն տեղի երեք Տարի եւ յետ այնու նորա Մահն: Վասնորոյ 458 + 29 + 3 = 490 Տարի, ի լրումն Դանիէլի Մարգարէութեան, եւ, միասին ընդ վերջիւնալ միւս փաստից՝ ի վկայութիւն Դէոնիսիոսի ձեռամբ սահմանադրեալ Փրկչական թուականին:

Լոնդոն Ս. Մ. Տէր ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱՊՐԱՆԱԾ ԿՐԾՆԵՐ

ՔՈՅՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐԸ

Քոյր ու եղբայր էին անոնք. Սաթե-նիկը եւ Արամը: Կը բնակէին գիւղին ծայրը, խեղճուկ տնակի մը մէջ — միակ հաւրատութիւն որ կը մնար իրենց ծնողքէն: Հայրենին կառուի մեռած էր. հազիւ ճանչցեր էին զայն: Մութ կերպով կը յիշէին, երբ ան մինչաղին, վերջապէս ըստ ուրեքներէն խոշորցած տուն կը մտնէր, բաց սրունքներով ու բազուկներով, իր օրուան աշխատանքէն՝ կռնակէն վար առնելով տոպրակը որ ունեցած կ'ըլլար երկու երեք խոշոր հացերով. եւ ուրիւ վրայ կ'երկնար, հրացանի փողի պէս, բահը կամ բրիչը, որուն կապումն էր միշտ չոր փայտերու խորձ մը, ամէն օրուան հացը տոլապին, եւ փայտը օճախին համար:

Այդ օճախը սիրուն յիշատակներ ունէր իրենց համար. իրիկունը բոցերը կը պարէին հոն, իրենց թարմ աչքերուն դէմ, եւ իրենց կարմիր լեզուներովը կը լըզուրուտէին սանը ուր ապուրը կ'երգէր կեանքի զուարթ երգը:

Հօրը մահէն հինգ տարի վերջ՝ մայրերնին կ'երթար հանգչիլ իր մարդուն կուշտին, զիւղին անշուք գերեզմանը: Կրակը